



ԳԵՐՆԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

### ԱՍՏՎԱԾԱՆՆԵՐԻ ԱՄՀԱՐԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

Աստվածաշունչը ամհարերեն լեզվով լույս ածեալ 1961 թվականի հուլիսին, Աղղիս-Արերայի «Լույս և խաղաղություն» կայսերական տպարանին մեջ, մեծ ուրախությամբ պատճառելով բոլոր եթովպացիներուն:

Հարեշական Ուղղափառ Եկեղեցվո պաշտոնական լեզուն գեեզերենն է, որ մին է սեմական լեզուներին: Դ դարուն Աստվածաշունչը սկսեալ գեեզերենի թարգմանվիլ: Աստվածապաշտության լեզուն և ամբողջ հարեշական դասական գրականությունը նույնպէս գեեզերենն են:

Հին ժամանակ հարեշական մեծամասնությունը գեեզերեն կխոսեր, կկարդար և կգրեր: ԺԹ դարեն սկսեալ գեեզերենը տեղի տվալ ամհարերենի, որ ներկայիս երկրին բնակչության մեծամասնության կողմէ խոսված լեզուն է: Մինչև մեր օրերուն, երբ Եթովպիո մեջ տակավին բացված չէին միջնակարգ վարժարաններ, ուսուցումը եկեղեցվո մենաշնորհն էր միայն և կկատարվեր գեեզերեն լեզվով վանքերուն մեջ: Տակավին Եթովպիո մեջ կարգ մը մենաստաններ կշարունակեն այս սովորությունը: Իսկ քաղաքներու եկեղեցիներուն մեջ ընդհանրապէս ընթերցվածները ամհարերեն լեզվով կկատարվին, իսկ

Ավետարանները կկարդացվին գեեզերեն լեզվով:

Աստվածաշունչը առաջին անգամ ամհարերենի թարգմանվեցալ անգլիական Ս. Գրոց ընկերության կողմէ ԺԹ դարուն և սկսալ մաս առ մաս հրատարակվիլ, մինչև որ ամբողջացալ 1840-ին: Երբ լույս ընծայված մատյանները Եթովպիա բերվեցան, Թեոդորոս կայսրը ուրախութենեն բացականչեց. «Աստված իմ, ի՛նչպէս մենք հարեշներս կրնանք մոռնալ անգլիացիները, որոնք մեզի հաղարավոր Աստվածաշունչ մատյաններ տվին»:

Ներկա կայսրը՝ Հայլե Սելասիե Ա, երբ տակավին խնամակալ իշխան էր, որոշեց Աստվածաշունչը գեեզերենն ամհարերենի վերածել տալ: Անգլիական Ս. Գրոց ընկերության կատարած թարգմանությունը գեեզերենն չէր եղած: Կայսրը 1918-ին Ս. Գրոց մասնագետ գիտնականներ մարմին մը կազմեց՝ Աստվածաշունչը թարգմանելու և գեեզերենի հետ միասին ի լույս ընծայելու համար: Այս մարմինը Աստվածաշունչն մասեր հրատարակեց, որոնք մեծապէս օգտակար հանդիսացան հաքեշ ժողովուրդի հոգևոր զարթոնքին: Նույն մարմինը 1931-ին, բո-



ԱՄՂԱՐԵՐԵՆ ԵՍՏՎԱԾԱՇՆՁԻ ԿԱԶՄԸ

վանդակ Աստվածաշունչը թարգմանած և լրացուցած ըլլալով, զայն հանձնեց կայսեր՝ հրատարակելու համար: Երբ Աստվածաշունչը մամուլի տակ էր, Եթովպիան գրավվեցավ իտալացիներեն: Կայսրը հեռացավ հայրենիքեն, վերադառնալու խոր հավատքով: Ան իր տարագրության մեջ իսկ, Լոնդոնի մեջ, հաջողցուց Աստվածաշունչի տպագրությունը ամհարերեն լեզվով և ցրվեց զայն արտասահման ապրող եթովպացիներուն՝ կարդալու համար:

Մեծն Բրիտանիո օգնությամբ երբ հայկ Սեյասիեն տիրացավ իր գահին, 1947 մարտ 6-ին կրկին Ս. Գրոց մասնագետ գիտնականներե հանձնախումբ մը կազմեց, այս անգամ Աստվածաշունչը երբայական և հունական

բնագրերու և գեեգրեների համեմատությամբ թարգմանելու համար: Հանձնախումբը այս հույժ կարևոր աշխատանքը հինգ տարիեն ավարտեց և 1952 ապրիլ 19-ին զայն հանձնեց կայսեր՝ հրատարակելու համար: Աստվածաշունչի այս նոր տպագրությունը, որ ավարտեցավ այս տարվան հուլիսին, կրադկանա 1370 գեղատիպ մեծագիր էջերե: Կանոնական գրքերեն զատ, ան կպարունակե նաև բոլոր պարականոն գրքերը:

Աստվածաշունչի ամհարերեն լեզվով հրատարակության առթիվ սրտեռանդն կիսափագինք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ղեկավարության ներքև Ս. Գրոց գիտնականների հանձնախումբ մը կազմվեր՝ Ս. Գիրքը աշխարհաբարի վերածելու և շուտով ի լույս ընծայելու՝ ի շինություն մերազնյա հայ ժողովուրդին:



ՄԻ ԷՋ ԱՄՂԱՐԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻՑ

